

տրուած են տպագրիչներէն, եւ կամ տպագրութեան տեղին զանց առնուած, սակայն ստոյգ ապացոյցներ ունիմ, որ ասոնք Կ. Պոլիս տպագրուած են հայ կաթողիկէներու եւ Յիսուսեաններու իբր 1695ին Պէյօղլու հաստատած տպարանին մէջ, որուն վրայ առանձին գլխով պիտի խօսիմ: Միտ դնելու է նաեւ՝ որ միեւնոյն Սահէթճի Սարգիսը 1698 Յունիսի 10ին «Լիվոնոյի», մէջ բառգիրք կը տպէ, եւ նոյն տարին Յունիսի 22ին Ամսդերտամ կը տպէ Շարակնոցերկու ստուար գրքեր 42 օրուան մէջ սկսեր է տպել իրարմէ իբր երկու ամսուան հետու քաղաքներու մէջ! Ինձ համար ստոյգ է որ Սարգիս Եպայս միջոցին Պոլսէն մեկնած չէր:

Աւետիք Պատրիարքն Կ. Պոլսոյ (Փետր. 1701—1703 Սեպտ. 8, եւ 1704—1706 Փետր. 3/14) յիշեալ Ինքնակենսագրութեան մէջ («Մասիս», 1874, Թ. 1494, որմէ նաեւ Հ. Ասատուր, Ընդ. Օր. 1901, էջ 118) կը յիշէ, թէ «Քռանցէ սինեօն էլչի պէկն զիւր Սահէթճի Սարգիս անուն թէրճիմանն ուղարկեալ էր մեր մօտ», որ անշուշտ եթէ մեր Սարգիս Եպ. Սահէթճին չէ, անոր մերձաւոր է: Իբրեւ ապացոյց ունիմ ստոյգ վկայութիւններ: Նախ անտարակուսելի է որ Սարգիս 1701ին Պոլիս էր: Զայս յայտնապէս կը յիշատակէ Բրուբականտայի աշակերտ եւ առաքելական միսիոնար Խաչատուր Վ. Արզումեցի իր օրագրութեանը մէջ, ուր գրած է կաթողիկէ եկեղեցականաց դէմ յարուցուած հալածանքի վրայ: (Դիւ. Մի.